ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել 26.1 կետով հետևյալ խմբագրությամբ.

«26.1. իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի կողմից հրագործական արտադրատեսակների առևտրի (իրացման), կիրառման (շահագործման) (բացառությամբ կենցաղային նշանակության հրագործական արտադրատեսակների), արտադրության, ներմուծմամբ զբաղվելու գործունեության, պահեստավորման թույլտվություն տալու համար»: **բազային տուրքի 50-պատիկի չափով**

Հոդված 2. 20.1 հոդվածի 1-ին մասի աղյուսակի 1)-ին կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

Հոդված 20.1. Օրենքով սահմանված դեպքերում ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունք ձեռք բերելու համար պետական տուրքի դրույքաչափերը

1. Ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունք ձեռք բերելու համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով.

1)	1~~) հրագործական ապրանքների արտադրության, ներմուծման կամ առևտրի իրականացման իրավունք ձեռք բերելու համար՝~~ **«Կենցաղային նշանակության հրագործական արտադրատեսակների առևտրի (իրացման) իրավունք ձեռք բերելու համար՝»:**

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից 6 ամիս հետո: